

## ԿԱՐԳ

# «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 2-ՐԴ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Խաղաղություն» միջազգային 2-րդ մանկապատանեկան ստեղծագործական մրցույթ-ցուցահանդեսը (Այսուհետ՝ Մրցույթ-ցուցահանդես) կազմակերպվում է աշխարհի տարբեր երկրներից երեխաների և պատանիների համար:
- 1.2. Մրցույթ-ցուցահանդեսը միտված է մշակութային կրթության ոլորտում, մասնավորապես կերպարվեստի բնագավառում շնորհալի երեխաների բացահայտմանը, նրանց ստեղծագործական ունակությունների և կարողությունների զարգացմանն ու ինքնադրսևորմանը:
- 1.3. Մրցույթ-ցուցահանդեսն ուղղված է խաղաղության, համերաշխության և հարգանքի գաղափարների տարածմանը:
- 1.4. Մրցույթ-ցուցահանդեսի հիմնադիր՝ «Արհեստագործների միություն» մշակութային հիմնադրամ (Այսուհետ՝ Կազմակերպիչ):
- 1.5. Մրցույթ-ցուցահանդեսի աջակից՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
- 1.6. Անցկացման ժամկետները՝ **մարտ-հուլիս, 2026թ., Հայաստան:**

### 2. ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՆՊԱՏԱԿԸ

- 2.1. Մրցույթ-ցուցահանդեսն անցկացվում է տաղանդավոր երեխաներին բացահայտելու նպատակով՝ հնարավորություններ ընձեռելով նրանց ստեղծագործական աշխատանքի միջոցով զարգացնելու երևակայությունը, նկարչական ունակությունները, մտքերը հանձնել թղթին գույների միջոցով և տեսնել խաղաղության նկատմամբ նրանց պատկերացումը:
- 2.2. Կերպարվեստի ոլորտում միջազգային կրթամշակութային հարթակի ձևավորում:
- 2.3. Ստեղծագործական անհատականության համակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում:

### 3. ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 3.1. Մասնակցի հաղորդակցությունը հոգևոր, բարոյական և մշակութային արժեքներին:
- 3.2. Մասնակցի գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության խթանումը:
- 3.3. Գեղարվեստական ստեղծագործության և ինքնարտահայտման դերի ամրապնդումը կերպարվեստի միջոցով անհատականության ձևավորման գործընթացում:

- 3.4. Ցուցահանդեսային գործունեության համար տարբեր երկրներից մանկապատանեկան ստեղծագործական աշխատանքների հիմնադրամի ստեղծումը:
- 3.5. Նպաստել միջմշակութային և ազգամիջյան մանկական և երիտասարդական հաղորդակցությունների զարգացմանը:
- 3.6. Կերպարվեստի բնագավառում միջազգային կապերի ամրապնդումը:

#### **4. ՄՐԳՈՒՅԹ-ԳՈՒԿԱԿԱՆՈՒՄԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

- 4.1. Մրցույթ-ցուցահանդեսին կարող են մասնակցել տարբեր երկրների շնորհալի երեխաներ (Այսուհետ՝ մասնակից) երկու տարիքային խմբերում.
  - ✓ **Մինչև 10 տարեկան**
  - ✓ **10-15 տարեկան ներառյալ**(մասնակցի տարիքը որոշվում է աշխատանքը մրցույթին ուղարկելու պահին):
- 4.2. Աշխատանքների թեման պետք է կապված լինի «Խաղաղության» հետ:
- 4.3. Մասնակցի ներկայացրած ստեղծագործական աշխատանքը (այսուհետ՝ աշխատանք) պետք է լինի.
  - ✓ հեղինակային,
  - ✓ այլ մրցույթներում չներկայացված,
  - ✓ նախորդ տարիներին «Խաղաղություն» մրցույթ-ցուցահանդեսին չներկայացված:
- 4.4. Մեկ մասնակիցը մրցույթ-ցուցահանդեսին կարող է ներկայացնել միայն մեկ ստեղծագործական աշխատանք: Մրցույթ-ցուցահանդեսին խմբակային աշխատանքներ չեն թույլատրվում:
- 4.5. Մրցույթ-ցուցահանդեսի մասնակցությունն անվճար է:
- 4.6. Մրցույթ-ցուցահանդեսին մասնակցելու համար ուսումնական հաստատություններն ինքնուրույն ընտրում են երեխաների լավագույն ստեղծագործական աշխատանքները:
- 4.7. Այն հայտերը, որոնք չեն համապատասխանում Մրցույթ-ցուցահանդեսի պահանջներին, չեն թույլատրվի մասնակցել Մրցույթ-ցուցահանդեսին:
- 4.8. Մրցույթին ուղարկված աշխատանքները չեն վերադարձվում հեղինակներին: Կազմակերպիչներն իրենց իրավունք են վերապահում օգտագործել դրանք մրցույթի հանրահռչակման և զարգացման նպատակով, օգտագործել դրանք մեթոդական և բարեգործական գործունեության մեջ, հրապարակվել հրատարակություններում, ցուցադրվել կամ կիրառվել «Արհեստագործների միություն» մշակութային հիմնադրամի գործունեության ընթացքում՝ առանց հեղինակի համաձայնության և առանց հեղինակային հոնորարի վճարման:
- 4.9. **Մրցույթ-ցուցահանդեսը կիրականացվի 2 փուլով.**

- **1-ին ՓՈՒԼ**

- ✓ Մասնակիցը ներկայացնում է 1 աշխատանք «Խաղաղության» թեմայով:
- ✓ Աշխատանքները կարող են կատարվել ցանկացած նյութի վրա (վատման, սովարաթուղթ, կտավ և այլն) և կատարվել նկարչական ցանկացած տեխնիկայով (յուղաներկ, ջրաներկ, տուշ, գունավոր մատիտներ, մատիտներ և այլն):
- ✓ Աշխատանքներն ընդունվում են բացառապես էլեկտրոնային (սկանավորված)՝ JPG կամ JPEG ձևաչափով:
- ✓ Աշխատանքի չափը՝ ոչ պակաս, քան A2 (420x594 մմ) ձևաչափ:
- ✓ Պատկերի թույլտվությունը՝ ոչ պակաս, քան 300 dpi:
- ✓ Պատկերի ծավալը՝ ոչ ավելի, քան 20 Մբ:
- ✓ Մրցույթ-ցուցահանդեսին հետևյալ հղումով <https://forms.gle/ZpmYhnjLHbqCyZnQ7> լրացնել հայտածևը և կցել մասնակցի աշխատանքը **ՍԿԱՆԱՎՈՐՎԱԾ** (scan-ը պարտադիր է) տարբերակով:

***Մրցույթ-ցուցահանդեսի հանձնաժողովը՝ 2-րդ փուլին (եզրափակիչ փուլ) մասնակցելու նպատակով կընտրի 80 մասնակից:***

- **2-րդ ՓՈՒԼ (եզրափակիչ փուլ)**

Մրցույթ-ցուցահանդեսի հաղթողների որոշում.

4.10. Մրցույթ-ցուցահանդեսի յուրաքանչյուր տարիքային խմբում սահմանված են հետևյալ մրցանակները.

- Գրան-պրի՝ Դիպլոմ և հուշաքանդակ մրցանակ
- Առաջին մրցանակ՝ Դիպլոմ և հուշաքանդակ մրցանակ
- Երկրորդ մրցանակ՝ Դիպլոմ և հուշաքանդակ մրցանակ
- Երրորդ մրցանակ՝ Դիպլոմ և հուշաքանդակ մրցանակ:

Երկրորդ փուլի այն մասնակիցները, ովքեր չեն արժանանում մրցանակների կպարգևատրվեն խրախուսական պատվոգրերով:

Ներկայացված աշխատանքների բարձր մակարդակ ցուցաբերած ուսումնական հաստատությունները կպարգևատրվեն շնորհակալագրերով:

Մրցույթ-ցուցահանդեսի դափնեկիրների ուսուցիչները կպարգևատրվեն ցուցահանդես-մրցույթի դիպլոմներով:

Մրցույթ-ցուցահանդեսի բոլոր մասնակիցները կստանան մասնակցության վկայական: Սահմանված են հատուկ մրցանակներ:

**5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- 5.1. Աշխատանքների գնահատման հիմնական չափանիշներն են՝ ստեղծագործության կատարման ինքնատիպությունը, համապատասխանությունը մրցույթի նշված թեմային, աշխատանքը մասնակցի կողմից ինքնուրույն կատարումը, աշխատանքի կատարման որակը (կոմպոզիցիա, գունային լուծում, նկարչական հմտություններ, դիզայն), աշխատանքի ընդհանուր գեղարվեստական մակարդակը:
- 5.2. Մրցութային հանձնաժողովի որոշումները վերջնական են և փոփոխման ենթակա չեն:
- 5.3. Մրցութային հանձնաժողովին իրավունք է վերապահվում անհրաժեշտության դեպքում մրցանակները կիսել կամ չչնորհել:

## 6. ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՎԱՅՐԸ

- 6.1. Աշխատանքները ընդունվում են **01.04.2026թ.-05.05.2026թ.** էլեկտրոնային տարբերակով՝ լրացնելով հայտաձևը հետևյալ հղումով <https://forms.gle/ZpmYhnjLHbqCyZnQ7>
- 6.2. Մրցույթ-ցուցահանդեսի եզրափակիչ փուլի մասնակիցների ընտրություն՝ **06.05.2026-16.05.2026 թ.:**
- 6.3. Ամփոփիչ ցուցահանդեսի կազմակերպում, հաղթողների հայտարարում, պարգևատրման արարողության իրականացում - **մայիսի 25-ից հունիսի 3-ը ընկած ժամանակահատվածում, 2026թ.:** Հաղթողների հայտարարման և պարգևատրման արարողության վայրը - ՀՀ, ք. Երևան,
- 6.4. Մրցույթի կազմակերպման և անցկացման վերաբերյալ բոլոր հարցերը, առաջարկությունները, պահանջները Կազմկոմիտեին ներկայացնել **մինչև 2026 թ. մայիսի 06-ը՝ [uacf.armenia.peace@gmail.com](mailto:uacf.armenia.peace@gmail.com)** էլեկտրոնային հասցեին, կայք՝ <https://artforpeacekids.com/>, կոնտակտային հեռախոսահամար՝ +37455424523 :

## 7. ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՔԸ

- 7.1. Շնորհալի երեխաների բացահայտում, նրանց կարողությունների զարգացում, արտադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների՝ այդ թվում արվեստի ու գեղարվեստի դպրոցների, ինչպես նաև ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների դերի բարձրացում, մարզերում մշակութային կյանքի աշխուժացում: